ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

REPUBLIC OF ARMENIA
KOTAYK MARZ
MUNICIPALITY OF
TSAKHKADZOR

2310 ք. Ծաղկաձոր Օրբելի Եղբ. 10 Tsakhkadzor city Orbeli Br.10
հեռ. +374 60 703000, էլ. հասցե tsaghkadzor.kotayq@mta.gov.am, meria@tsakhkadzor.am

15 նոյեմբեր 2023թ. N 1444

«ՇՏՌԱԲԱԳ» ՍՊԸ
Տնօրեն Գ.Պողոսյանին
Հասցե՝Կոտայքի մարզ,ք.Չարենցավան,6-րդ թաղամաս, 16 շենք, 3-րդ բացվածք
ՀՎՀՀ՝ 03026439
Էլեկտրոնային փոստ՝ strabag.am@gmail.com

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Հարգելի պարոն Պողոսյան

Ծաղկաձորի համայնքապետարանի (այսուհետ՝Պատվիրատու) և «Շտռաբագ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 25 հուլիս 2022թ. կնքվել է թիվ «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-22/17» ծածկագրով Կապալային աշխատանքների կատարման պայմանագիր: Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման վերջնաժամկետը սահմանված է եղել 2023թ. նոյեմբերի 1-ը: Պայմանագրի համաձայն՝ «Շտռաբագ» ՍՊԸ-ն պարտավոր էր սահմանված ժամկետում Ծաղկաձոր համայնքում տեղադրել թվով 4 կանգառ,սակայն մինչ այժմ տեղադրվել է 3-ը, այն էլ թերություններով,մասնավորապես՝ չեն տեղադրվել ապակիները,որոշ դետալներ առկա չեն,ինչպես նաև կանգառները արդեն ժանգոտվել են:

Ծաղկաձորի համայնքապետարանը բազմիցս զգուշացրել է պայմանագրով նախատեսված պարտականությունները կատարելու (4-րդ կանգառը տեղադրելու) համար,սակայն Կապալառուն հրաժարվել է՝ պատճառաբանելով,թե իբր կանգառներից մեկի ապամոնտաժման արդյունքում վնասվել է կանգառը և լրացուցիչ ֆինանսավորման դեպքում կտեղադրվի:

Ծաղկաձորի համայնքապետարանի կողմից կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ ապամոնտաժված կանգառի հետ միասին ևս 2 կանգառ տեղադրվել է Ծաղկաձոր համայնքի տարածքում, իսկ 4-րդ կանգառը գտնվում է Կապալառուի տիրապետության տակ:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի՝

Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

Քաղաքացիական օրենսգրքի 466 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:»

Հաշվի առնելով այն հանգամանքը,որ Կապալառուն խախտել է Պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Պատվիրատուն,հիմք ընդունելով վերը նշված իրավական հիմքերը, թիվ «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-22/17» ծածկագրով պայմանագիրը համարում է միակողմանի մասնակի լուծված՝ 5,022,794 /հինգ միլիոն քսաներկու հազար յոթ հարյուր իննսունչորս/ ՀՀ դրամ գումարի չափով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվի ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները, համաձայն որի՝ «պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին.»:

Պատվիրատուն գնման ընթացակարգը միակողմանիմասնակի լուծելու մասին որոշում կներկայացնի Լիազոր մարմին՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի պահանջները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Կատ.՝ Սամվել Ալոյան
Հեռ. +37460680139